ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

## Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 373:941(479.25)
ԳՄԴ 74.2+63.3(2Հ)
Հ 282

Կազմողներ՝

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ - ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գնահատման և թեստավորման կենտրոն

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, Կրթության ազգային ինստիտուտ

ԷԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական պետական մանկավարժական համալսարան

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան

ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարան

Խմբագիր՝ ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ

Հ 282 Հայոց պատմություն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց.- Եր.: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012.- 40 էջ:

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

ISBN 978-9939-805-67-2

© Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012թ.

# ՆԱԽԱԲԱՆ

«Հայոց պատմություն» առարկայի ուղեցույցում սահմանվում են 2013թ. պետական ավարտական և միասնական քննության թեստում ընդգրկվելիք առաջադրանքների թեմատիկ-բովանդակային սահմանները, ներկայացվում է թեստի նոր կառուցվածքը, որը նախորդ տարիների համեմատությամբ կրել է որոշակի փոփոխություններ, տրվում են առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տիպերը, առաջադրանքների կատարման եղանակների բացատրություններ և պատասխանների ձևաթղթի լրացման կարգը:

2013թ. պետական ավարտական և միասնական քննության թեստի նոր կառուցվածքը պայմանավորված է նրանով, որ, ի հավելումն ընտրովի պատասխաններով առաջադրանքների, թեստում ընդգրկվել են նաև կարճ պատասխաններով առաջադրանքներ:

Հուսով ենք՝ սույն ուղեցույցը շրջանավարտներին և դիմորդներին կօգնի լավագույնս նախապատրաստվելու «Հայոց պատմություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությանը:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ-ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Միասնական քննության թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և պարունակում է 80 առաջադրանք: Թեստում ընդգրկված առաջադրանքները բաղկացած են բովանդակային 8 և կառուցվածքային 2 տիպերից:

Քննական թեստի 80 առաջադրանքներից 68-ը ընտրովի պատասխանով են, իսկ 12-ը՝ կարճ պատասխանով:

Ա մակարդակը պարունակում է 50 առաջադրանք (1-50-րդ), որոնցից 46-ը ընտրովի պատասխանով են (1-46-րդ), 4-ը՝ կարճ (47-50-րդ):

Բ մակարդակը պարունակում է 30 առաջադրանք (51-80-րդ), որոնցից 22-ը ընտրովի պատասխանով են (51-72-րդ), 8-ը՝ կարճ (73-80-րդ):

Ա մակարդակը վերաբերում է պետական ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին, իսկ Ա և Բ մակարդակներն ընդգրկող միասնական տարբերակը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության մրցույթին:

Ա մակարդակի 50 առաջադրանքները ժամանակագրական և բովանդակային առումով բաշխվելու են հնարավորինս համամասնորեն: Դրանցում ներառվելու են հայոց պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանի վերաբերյալ գրեթե նույն թվով հարցեր: Միաժամանակ դրանցում, որպես կանոն, արտացոլվելու են սույն ուղեցույցում ներկայացված հայոց պատմության բովանդակային դասիչի բոլոր թեմաները:

Բ մակարդակի առաջադրանքները կազմվելու են նույն սկզբունքով: Պարզապես Բ մակարդակում հնարավոր է համամասնության որոշակի խախտում, քանզի՝ 1) նրանում ներառվելու են թվով ավելի քիչ առաջադրանքներ, 2) այս մասի առաջադրանքները պահանջում են գիտելիքների ավելի խոր իմացություն:

Ստորև ներկայացվում է առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը

| Առաջադրանքների բովանդակային տիպերը | | Կառուցվածքային տիպերը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ա մակարդակ | | Բ մակարդակ | |
| | | Ընտրովի պատասխանով | Կարճ պատասխանով | Ընտրովի պատասխանով | Կարճ պատասխանով |
| 1 | Տարեթվերի իմացություն | 12 (1-8, 30-33) | --- | --- | --- |
| 2 | Փաստերի և երևույթների իմացություն | 12 (9-16, 34-37) | --- | --- | --- |
| 3 | Աշխատանք սկզբնաղբյուրների հետ | 4 (17-18, 38-39) | --- | --- | --- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն | 3 (19-20, 40) | 1 (47) | 2 (51-52) | 2 (73-74) |
| 5 | Պատմական իրադար-ձությունների և երևույթների պատճառ-ների ու հետևանքների իմացություն | 3 (21-22, 41) | 1 (48) | 4 (53-54, 66-67) | 2 (75-76) |
| 6 | Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանա-կագրական հաջորդա-կանության իմացություն | 7 (23-26, 42-44) | 1 (49) | 4 (55-58) | 2 (77-78) |
| 7 | Պատմական իրադար-ձությունների, երևույթ-ների, փաստերի, տարե-թվերի, կրթամշակութա-յին հաստատություն-ների, վայրերի, ստեղծա-գործությունների, տեղա-նունների կամ անձնա-նունների համապա-տասխանեցում | 4 (27-28, 45-46) | --- | 6 (59-62, 68-69) | --- |
| 8 | Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում | 1 (29) | 1 (50) | 6 (63-65,70-72) | 2 (79-80) |

# ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննական թեստի առաջադրանքների պահանջները ձևակերպվում են հարցերի կամ հանձնարարությունների ձևով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից մեկն է ճիշտ: Անհրաժեշտ է ընտրել ճիշտը:

Կարճ պատասխանով առաջադրանքներն ունեն կատարման այլ եղանակ: Դրանցում պահանջից հետո տրվում են պատասխանի համարակալված չորսից ինը տարբերակներ (պնդումներ, բացատրություններ, տերմիններ, իրադարձություններ և այլն), որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան(ներ)ը: Ա մակարդակում կարող են ճիշտ լինել պատասխանի համարակալված տարբերակներից մեկը կամ երկուսը: Այն առաջադրանքում, որտեղ ճիշտ պատասխան է հանդիսանում համարակալված տարբերակներից միայն մեկը, պետք է նշել միայն դա, իսկ այն դեպքում, երբ ճիշտ պատասխան են հանդիսանում համարակալված տարբերակներից երկուսը, պետք է երկուսն էլ գրանցել: Հակառակ դեպքում տվյալ առաջադրանքի պատասխանը կհամարվի սխալ: Բ մակարդակի կարճ պատասխանով առաջադրանքներում ճիշտ են պատասխանի համարակալված տարբերակներից երկուսը կամ երեքը: Այդ դեպքում, կախված առաջադրանքի պահանջից, անհրաժեշտ է ընտրել պատասխանի համարակալված տարբերակներից երկու կամ երեք ճիշտ պատասխանները, այլապես տվյալ առաջադրանքի պատասխանը կհամարվի սխալ:

Ի տարբերություն Ա մակարդակի՝ Բ մակարդակի առաջադրանքներն ավելի բարդ են և քննությունը հանձնողից պահանջում են առարկայի ավելի խոր իմացություն:

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո քննություն հանձնողը ճիշտ պատասխանները պետք է գրանցի պատասխանների ձևաթղթում: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 միավոր, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0:

Հաջորդիվ ներկայացվում են թեստային առաջադրանքների նմուշներ՝ կատարման վերաբերյալ բացատրություններով:

<u>Ա մակարդակ</u>

**• Տարեթվերի իմացություն**

Այս առաջադրանքները միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ՝ «Ե՞րբ է Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանը հաստատվել Երևանի նահանգի դիկտատոր»:

1) 1917 թ. դեկտեմբերին
2) 1918 թ. մայիսի 28-ին
3) 1918 թ. մարտի 24-ին
4) 1915 թ. մայիսի 7-ին

*Ճիշտ պատասխանն է **3-րդը**:*

*<u>Այս և ընտրովի պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը պետք է համապատասխան համարով առաջադրանքի սյունակի չորս վանդակներից մեկում դնի «X» նշանը</u>* (**տես՝ «Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը» բաժինը**):

**• Փաստերի և երևույթների իմացություն**

Այս առաջադրանքները նույնպես միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ՝ «Ո՞վ էր ստանձնել Զեյթունի 1862թ. ապստամբության ընդհանուր ղեկավարությունը»:

1) Մկրտիչ Յաղուբյանը
2) Նազարեթ Չավուշը
3) Գարուն Աղասին
4) Պապիկ Ենի-Տունյանը

*Ճիշտ պատասխանն է **1-ինը**:*

**• Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**

Այս առաջադրանքները ևս միայն ընտրովի պատասխանով են: Ներկայացվում են պահանջը և սկզբնաղբյուրային մեջբերումը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ ա) Հայոց ո՞ր արքայի գործունեության մասին է Մովսես Խորենացու ստորև բերվող վկայությունը:

«…հրամայել է որոշել գյուղերի և ագարակների սահմանները…, կոփել է տվել քառակուսի քարեր և տնկել հողի մեջ»:

1) Տիգրան II-ի
2) Արտավազդ II-ի
3) Երվանդ IV-ի
4) Արտաշես I-ի

*Ճիշտ պատասխանն է **4-րդը**:*

Օրինակ բ) Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին: «Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար… Մենակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

Ո՞վ է ներկայացված խոսքերի հեղինակը:

1) Սիմոն Վրացյանը
2) Արամ Մանուկյանը
3) Գարեգին Նժդեհը
4) Անդրանիկ Օզանյանը

*Ճիշտ պատասխանն է **2-րդը**:*

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

<u>*Ընտրովի պատասխանով*</u> առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս տերմին կամ հասկացություն, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ ա/ «Ինչպե՞ս էին անվանում արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարին Արշակունիների օրոք»:

1) մարդպետ
2) սպարապետ
3) մաղխազ
4) ոստանիկ

*Ճիշտ պատասխանն է **3-րդը**:*

Որոշ դեպքերում առաջադրանքների համար առաջարկվող պատասխանները շարունակում են պահանջի միտքը: Դարձյալ տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ բ/ «Նէպը տնտեսական քաղաքականություն էր, որի նպատակն էր…»:

1) ապահովել գյուղատնտեսության արագ կոլեկտիվացումը:
2) շուկայական հարաբերությունների հիման վրա աշխուժացնել ու զարգացնել երկրի տնտեսությունը:
3) բացառել ազատ առևտուրը և շուկայական հարաբերությունները:
4) սահմանափակել կալվածատիրական հողատիրությունը:

*Ճիշտ պատասխանն է **2-րդը**:*

<u>*Կարճ պատասխանով*</u> առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված տարբերակներ,

որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող բոլոր տարբերակների համարները:

Օրինակ՝ Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

1) Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր շահապ:

2) Հայդուկ արաբերեն նշանակում է տասնապետ:

3) Օսմանյան կայսրությունում ազդեցություն ձեռք բերելու և նրանից զանազան զիջումներ կորզելու նպատակով եվրոպական մեծ տերությունների միջև պայքարի արդյունքում առաջացած միջազգային հարաբերությունների հիմնախնդիրը ստացել է «Արևելյան հարց» անվանումը:

4) Կիլիկիայում XIII դարի սկզբներին ստեղծված պաշտպանական ամրությունները կոչվել են սղնախներ:

5) Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ:

*Ճիշտ պատասխանն է **3 և 5**:*

*Այս և կարճ պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը պետք է համապատասխան համարով առաջադրանքի հորիզոնական վանդակներում նշի ճիշտ պատասխան հանդիսացող տարբերակների համարները (թվերը), իսկ եթե ճիշտ պատասխան է հանդիսանում տարբերակներից մեկը, ապա միայն դրա համարը (թիվը): Ընդ որում յուրաքանչյուր վանդակում պետք է նշել մեկ թիվ* (տես՝ «Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը» բաժին)*:*

**• Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս պնդում կամ փաստարկ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանը:

Օրինակ՝ «Ինչո՞վ էր պայմանավորված Վանի թագավորության և Ասորեստանի հարաբերությունների մերձեցումը Արգիշտի II-ի օրոք»:

1) Երկու պետություններում էլ արդեն իշխում էին նույն արքայատոհմի ներկայացուցիչներ:
2) Նրանք արդեն սահմանակից պետություններ չէին:
3) Արգիշտի II-ը ընդունել էր Ասորեստանի գերիշխանությունը:

4) Նրանց համար հանդես էին եկել նոր վտանգավոր հակառակորդներ:

*Ճիշտ պատասխանն է **4-րդը:***

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող տարբերակի համարը: Իսկ եթե առաջադրանքում ճիշտ պատասխան են հանդիսանում համարակալված տարբերակներից երկուսը, ապա պետք է երկուսն էլ ընտրել:

Օրինակ՝ Խորհրդային կառավարությունը 1953թ. մայիսին պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի, որովհետև՝

1) Թուրքիան դարձել էր ԽՍՀՄ-ի դաշնակիցը:
2) Սկսվել էր սառը պատերազմը:
3) Ստալինը խուսափեց Թուրքիայի հետ ռազմական բախումից:
4) Ստեղծվել էր Հյուսիսատլանտյան դաշինքը և Թուրքիան անդամակցել էր դրան:
5) Վարշավյան դաշինքի երկրները չաջակցեցին խորհրդային պետությանը այդ հարցում:

*Ճիշտ պատասխանն է **2 և 4:***

• **Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 4-6 անունների կամ իրադարձությունների շարք, ինչպես նաև պատասխանի չորս տարբերակ: Պետք է ընտրել ճիշտ պատասխանը:

Օրինակ՝ «Բագրատունի արքաներին դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության»:

ա) Աշոտ Ողորմած
բ) Գագիկ I
գ) Աշոտ Երկաթ
դ) Սմբատ II

1) գ, դ, ա, բ
2) գ, ա, դ, բ
3) ա, գ, դ, բ
4) ա, բ, գ, դ

*Ճիշտ պատասխանն է **2-րդը:***

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող տարբերակի համարը:

Օրինակ՝ «Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Արծնի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը:

2) Աշոտ Մսակերի նստավայրի տեղափոխումը Դարույնքից Բագարան:

3) Նկան ամրոցի հերոսական դիմադրությունն Աշոտ Արծրունու գլխավորությամբ:

4) Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու կառավարման սկիզբը:

5) Հովնան Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունի եղբայրների գլխավորությամբ արաբների ոչնչացումը Տարոնում:

6) Բուղայի պարտությունը և հեռացումը Հայաստանից:

*Ճիշտ պատասխանն է **3:***

• **Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում**

Այս տիպի առաջադրանքները միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում ընդգրկվում են չորսից հինգ, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պետք է կազմել չորս ճիշտ զույգերից կազմված շարք, բնականաբար, նախապես բացառելով երկրորդ շարքում առկա ավելորդ անունը, և ընտրել պատասխանի չորս տարբերակներից ճիշտը:

Օրինակ՝ «Կրթական հաստատությունները համապատասխանեցնել դրանց հիմնադրման վայրերի հետ»:

| | |
|---|---|
| 1) Աղաբաբյան դպրոց | ա) Մոսկվա |
| 2) Մեսրոպյան դպրոց | բ) Աստրախան |
| 3) Մարդասիրաց ճեմարան | գ) Զմյուռնիա |
| 4) Սկյուտարի դպրոց | դ) Կ.Պոլիս |
| | ե) Կալկաթա |

1) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ

2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե
3) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ

*Ճիշտ պատասխանն է **3-րդը:***

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և երեք սյունակից բաղկացած աղյուսակ, և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Ըստ աղյուսակի առաջին սյունակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

| N | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վանի ինքնապաշտպանության սկիզբը | 1 | 1895 թ. հոկտեմբեր | 1 | Նիկոլ Դուման |
| 2 | Խանասորի արշավանքը | 2 | 1894 թ. օգոստոսի վերջ | 2 | Մկրտիչ Ավետիսյան |
| 3 | Զեյթունի ապստամբության սկիզբը | 3 | 1896 թ. հունիսի 3 | 3 | Մեծն Մուրադ |
| 4 | Սասունի հերոսամարտի ավարտը | 4 | 1897 թ. հուլիսի 25 | 4 | Աղասի |
| | | 5 | 1890 թ. հուլիս | 5 | Անդրանիկ |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 2 | 3 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 5 | 5 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 4 | 3 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 1 |
| 2 | 1 | 2 |
| 3 | 4 | 3 |
| 4 | 2 | 4 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 2 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 3 | 4 |
| 4 | 1 | 5 |

*Ճիշտ պատասխանն է **1-ինը:***

• **Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

*__Ընտրովի պատասխանով__* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական փաստարկներ կամ պնդումներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանը:

Օրինակ՝ Տրված պնդումներից ո՞րը ճիշտ չէ.

1) Ֆլորենցիայում դուքսը Իսրայել Օրուն խոստացավ զորք տրամադրել՝ Հայաստանն ազատագրելու նպատակով:

2) Հայաստանի ազատագրության «Պֆալցյան ծրագրում» թվարկվում էին այն ուղիներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ էին պարսիկներին Հայաստանից վտարելու համար:
3) Վիեննայի արքունիքը համաձայնվեց մասնակցել Հայաստանի ազատագրման գործին:
4) 18-րդ դարի սկզբին Ռուսաստանը պայքար էր սկսել Բալթիկ, Սև և Կասպից ծովերի ափերին հաստատվելու համար:

*Ճիշտ պատասխանն է **3-րդը:***

<u>*Կարճ պատասխանով*</u> առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող բոլոր տարբերակների համարները:

Օրինակ՝ Ընտրել երկու ճիշտ պնդումները:

1) Սան Ստեֆանոյի հաշտությամբ Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կարինի, Վանի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով:
2) Վան քաղաքի մտավորականության գաղափարական ներշնչողներն են եղել Մկրտիչ Խրիմյանը, Մկրտիչ Փորթուգալյանը և Մկրտիչ Ավետիսյանը:
3) «Հայասեր-ազգասեր» խմբակը գաղտնի կերպով տպագրել է «Ազատության ավետաբեր» թերթը:
4) Բեռլինի պայմանագրով Բաթումն ու Բայազետի գավառը վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը:
5) Հնչակյանների ազգային թևը Ա. Նազարբեկյանի գլխավորությամբ հեռացել է կուսակցությունից և հանդես է եկել Վերակազմյալ հնչակյաններ անունով:
6) Սայքս-Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության տարածքները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:

*Ճիշտ պատասխանն է **2 և 6:***

## <u>Բ մակարդակ</u>

• **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

<u>*Ընտրովի պատասխանով*</u> առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են չորսից ինը տերմիններ կամ հասկացություններ և դրանց բացատրության վերաբերյալ մեկով ավելի տարբերակներ, և տրվում է պատասխանի չորս տարբերակ: Պետք է ընտրել ճիշտ պատասխանը:

Օրինակ՝ Հասկացությունները համապատասխանեցնել նրանց տրվող բացատրություններին.

1) սարդար
2) աշար
3) թանզիմաթ
4) պոլոժենիե

ա) հողահարկ
բ) բարենորոգումների հրովարտակ
գ) զորահրամանատար
դ) վարչական միավոր
ե)կանոնադրություն

1) 1-ա, 2-բ. 3-ե, 4-գ
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե
3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ
4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ

*Ճիշտ պատասխանն է* ***2-րդը:***

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված մինչև ինը տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող բոլոր տարբերակների համարները:

Օրինակ՝ Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին.

1) Դրամական աշխատավարձի կիրառումից հրաժարումը:
2) Ազատ առևտրի վերականգնումը:
3) Քաղաքի և գյուղի միջև ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը:
4) Պարենհարկի փոխարեն պարենմասնատրման կիրառումը:
5) Հարկի չափի սահմանումը ցանքսից հետո՝ բերքահավաքից առաջ:
6) Գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների սահմանափակումը:
7) Մանր ու միջին բոլոր ձեռնարկությունների պետականացումը:
8) Հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումների արգելումը:

*Ճիշտ պատասխանն է* ***2; 3 և 6:***

• **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորս պնդում կամ փաստարկ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ ա) Ինչո՞ւ Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը.

1) Որպեսզի թուլացնի Պարթևստանի դիրքերը Մերձավոր Արևելքում:
2) Որպեսզի թուլացնի Հռոմի դիրքերը Մերձավոր Արևելքում:
3) Որպեսզի ուժեղացնի Պարթևստանի ազդեցությունը Մերձավոր Արևելքում:
4) Որպեսզի թուլացնի Սելևկյան պետության դիրքերը Մերձավոր Արևելքում:

*Ճիշտ պատասխանն է **4-րդը:***

Որոշ դեպքերում առաջադրանքների համար առաջարկվող փաստարկները շարունակում են պահանջի միտքը: Այդ դեպքում պահանջից հետո ներկայացվում են փաստարկները, և տրվում է պատասխանի չորս տարբերակ: Պետք է ընտրել պատասխանի այն տարբերակը, որում ներառված են բոլոր ճիշտ փաստարկները:

Օրինակ բ) Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում 1723 թ. թուրքական բանակի դեպի Անդրկովկաս արշավելու պատճառները:

Թուրքիան նպատակ ուներ…

ա) բացառել ապստամբ աֆղանների ներխուժումը թուրքական տարածքներ:
բ) նվաճել Անդրկովկասը և Պարսկաստանի արևմտյան նահանգները:
գ) ճնշել հայ և վրաց ժողովուրդների ազատագրական շարժումները:
դ) օգնել Պարսկաստանին հետ մղելու լեզգիների արշավանքները:
ե) թույլ չտալ հայ և վրաց գործիչների հետագա բանակցությունները Արևմուտքի հետ:
զ) խոչընդոտել տարածաշրջանում ռուսական ազդեցության ուժեղացմանը:

1) բ, գ, ե
2) բ, գ, զ
3) ա, դ, զ
4) գ, դ, ե

*Ճիշտ պատասխանն է **2-րդը:***

*<u>Կարճ պատասխանով</u>* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված յոթից ինը տարբերակներ: Պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող բոլոր տարբերակների համարները:

Օրինակ՝ Սևրի պայմանագիրը պատմական տվյալ պայմաններում չիրագործվեց, որովհետև՝

1) Անկարայի երիտթուրքական կառավարությունը չճանաչեց պայմանագիրը և վարեց այն ձախողելու քաղաքականություն:

2) Խորհրդային Ռուսաստանը չկատարեց իր վրա դրված պայմանագրային պարտավորությունները:
3) Թուրքիայի սուլթանական կառավարությունը երկրում այլևս փաստական իշխանություն չուներ:
4) Չվավերացվեց այն ստորագրած դաշնակից գլխավոր երկրների կողմից:
5) Դաշնակից երկրները ոչ միայն ճնշում չգործադրեցին քեմալականների վրա պայմանագիրը կատարելու հարցում, այլև համագործակցեցին նրանց հետ:
6) Հայաստանը չստացավ Վրաստանի աջակցությունը:
7) Հայկական երկու պատվիրակությունները միասնական չէին գործում:
8) Կնքվել էր Բրեստ-Լիտովսկի հաշտությունը:

*Ճիշտ պատասխանն է **3; 4 և 5:***

**• Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է յոթից տասը անունների կամ իրադարձությունների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ ա) Տիգրան Մեծի օրոք տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Օսրոյենեի, Աղիաբենեի և Միգդոնիայի միացումը Հայոց թագավորությանը:
բ) Հրահատ III-ի վտարումը Հայաստանից:
գ) Պարթևների թագավորանիստ Էկբատանի գրավումը:
դ) Պտղոմայիս քաղաքի գրավումը:
ե) Կորդուքի միացումը Հայոց թագավորությանը:
զ) Ասորիքի գրավումը:
է) Վիրքի և Աղվանքի հպատակեցումը:
ը) Հռեաստանի և Նաբաթեա թագավորության կողմից Տիգրանի գերիշխանության ընդունումը:
թ) Ծոփքի միացումը Հայոց թագավորությանը:
ժ) Մարաստանի գրավումը:

1) թ, ե, զ,է, ժ, գ, դ, բ, ա, բ
2) զ, թ, ե, բ, ժ, ը, է, գ, ա, դ
3) թ, ե, է, ժ, գ, ա, զ, ը, դ, բ
4) բ, ժ, գ, թ, ե, է, զ,ա, դ, ը

*Ճիշտ պատասխանն է **2-րդը:***

Օրինակ բ) Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը.

ա) Մեսրոպ Մաշտոցի մահը:

բ) Դենշապուհի կողմից Արևելյան Հայաստանում աշխարհագրի անցկացումը:

գ) Շահապիվանի եկեղեցական ժողովը:

դ) Սահակ Պարթևի մահը:

ե) Ավարայրի ճակատամարտը:

զ) Արտաշատի ժողովի կողմից Հազկերտ II-ի՝ զրադաշտականություն ընդունելու պահանջի մերժումը:

է) Խաղխաղի ճակատամարտը:

ը) Որմզդական հրի վառելը Բագրևանդ գավառի Բագավանի տաճարում:

թ) Ղևոնդ Երեցի գլխավորությամբ հայ բնակչության հարձակումը մոգերի վրա Անգղում:

ժ) Գյուտ կաթողիկոսի աթոռակալության սկիզբը:

1) ա

2) գ

3) ը

4) զ

*Ճիշտ պատասխանն է **3-րդը:***

<u>*Կարճ պատասխանով*</u> առաջադրանքներում ձևակերպումից հետո տրվում է անունների կամ իրադարձությունների յոթից ինը շարք: Պետք է ընտրել բոլոր այն տարբերակների համարները, որոնք խախտում են շարքի հաջորդական դասավորությունը:

Օրինակ՝ Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Թորոս II-ի կողմից բյուզանդական զորքերի ջախջախումը Մսիս քաղաքի մոտ:

2) Երուսաղեմի գրավումը Սալահ ադ Դինի կողմից:

3) Մլեհի կողմից Մսիս, Տարսոն և Ադանա քաղաքների ազատագրումը բյուզանդացիներից:

4) Միրիոկեֆալոնի ճակատամարտը:

5) Սրբազան հռոմեական կայսրության կայսեր կողմից թագ ուղարկելը Լևոն II իշխանին:

6) Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը:

7) Լևոն II Ռուբինյանի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագրի կնքումը:

8) Լևոն II Ռուբինյանի հանդիսավոր օծումը հայոց թագավոր:

9) Հայոց կաթողիկոսության տեղափոխումը Սիս:

*Ճիշտ պատասխանն է **2 և 5:***

• **Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում**

Այս առաջադրանքները նույնատիպ չեն և աստիճանաբար բարդանում են: Ընդ որում այս առաջադրանքները միայն ընտրովի պատասխանով են: Չնակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում ընդգրկվում են վեցից տասը, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պետք է կազմել չորս ճիշտ զույգերից կազմված շարք, բնականաբար, նախապես բացառելով երկրորդ շարքում առկա ավելորդ անունը, և ընտրել պատասխանի չորս տարբերակներից ճիշտը:

Օրինակ ա) Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոնների հետ:

| | |
|---|---|
| 1. Հ. Հախվերդյան | ա) արդարադատության նախարար |
| 2. Խ. Կարճիկյան | բ) զինվորական նախարար |
| 3. Ա. Մանուկյան | գ) ֆինանսների նախարար |
| 4. Գ. Պետրոսյան | դ) ներքին գործերի նախարար |
| 5. Ա. Խատիսյան | ե) մշակույթի նախարար |
| 6. Հ. Քաջազնունի | զ) արտաքին գործերի նախարար |
| | է) նախարար-նախագահ |

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-ե, 5-զ, 6-է
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-զ, 6-է
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-գ, 6-զ
4) 1-ե, 2-է, 3-բ, 4-ա, 5-գ, 6-զ

*Ճիշտ պատասխանն է 2-րդը:*

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և չորս սյունակից բաղկացած աղյուսակ, և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Ըստ աղյուսակի առաջին սյունակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

Օրինակ բ) Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը և վայրը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը | | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անանիա առաքյալի անապատի հիմնադրումը | 1 | 1618թ. | 1 | Խաչատուր Կեսարացի | 1 | Վենետիկ |
| 2 | Հայատառ ղփչաղերեն աղոթագրքի տպագրությունը | 2 | 1638թ. | 2 | Հովհաննես Քարմատանենց երեց | 2 | Լվով |
| 3 | Հայկական տպարանի հիմնումը | 3 | 1565թ. | 3 | Աբգար դպիր Թոխատեցի | 3 | Երևան |
| 4 | «Խառնայփնթուր տումարի, գեղեցիկ և պիտանի» տոմարացույցի տպագրությունը | 4 | 1620թ. | 4 | Մովսես Տաթևացի | 4 | Նոր Ջուղա |
| | | 5 | 1562թ. | 5 | Խաչատուր Ջուղայեցի | 5 | Կ. Պոլիս |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 5 | 2 | 2 |
| 2 | 4 | 4 | 5 |
| 3 | 5 | 3 | 1 |
| 4 | 1 | 5 | 4 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 4 | 3 |
| 2 | 1 | 2 | 2 |
| 3 | 2 | 3 | 1 |
| 4 | 3 | 1 | 4 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 4 | 3 |
| 2 | 1 | 2 | 2 |
| 3 | 2 | 1 | 4 |
| 4 | 3 | 3 | 1 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 4 | 5 |
| 2 | 4 | 5 | 2 |
| 3 | 2 | 1 | 5 |
| 4 | 5 | 3 | 1 |

*Ճիշտ պատասխանն է 3-րդը:*

- **Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում**

Այս առաջադրանքները կառուցվածքային երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է յոթից տասը պատմական

փաստարկների կամ պնդումների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Օրինակ՝ Տրվածներից ո՞ր երեք կետերը Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագրից չեն.

ա) Հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկել Արցախի մելիքներին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք ու զենք:
բ) Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:
գ) Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
դ) Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել հավիտենական դաշինք:
ե) Թուրքիայի դեմ արշավանք սկսել Թիֆլիս-Ախալցխա-Կարս և Երևան-Բայազետ-Վան ուղղություններով:
զ) Հայերից ու վրացիներից կազմավորված զորաջոկատների հրամանատարը պետք է լիներ հայազգի և ենթարկվեր ռուսական հրամանատարությանը:
է) Հայաստանի մայրաքաղաք պետք է դառնար Վաղարշապատը կամ Անին:

1) բ, դ, ե
2) ա, դ, զ
3) բ, դ, է
4) գ, ե, զ

*Ճիշտ պատասխանն է **3-րդը:***

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող բոլոր տարբերակների համարները:

Օրինակ՝ Ընտրել երեք ճիշտ պնդումները.

1) 1970-ական թթ. խորհրդային երկրում ի հայտ եկած «այլախոհ» հասկացությունը բնութագրում էր մարդկանց, ովքեր ուժային միջոցներով պայքարում էին ամբողջատիրական համակարգը փոխելու համար:
2) Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցած զանգվածային ցույցերի և հանրահավաքների նման ելույթներ Հայաստանում եղել էին նաև 1930-ական թթ.:
3) Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության ընձեռած ազատության պայմաններում Արցախի բնակչությունը սկսեց ավելի համարձակ պայքարել ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու համար:

4) Առաջին հնգամյակի տարիներին Հայաստանում շահագործման հանձնվեց 18, իսկ երկրորդ հնգամյակի տարիներին՝ 26 արդյունաբերական ձեռնարկություն:
5) Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառեց հարկերի ավելացման քաղաքականությունը:
6) Կերչի մոտ մղած մարտերից բացի՝ 390-րդ հայկական դիվիզիան մասնակցեց նաև Բեռլինի գրավման օպերացիային:
7) Սփյուռքում 1921-1990 թթ. կարևոր դերակատարում ունեին հայ ավանդական կուսակցությունները, որոնց գործունեության առաջնային թիրախները Հայկական հարցի լուծումը և ցեղասպանության միջազգային ճանաչումն էին:
8) Մինչև նոր Սահմանադրության ընդունումը ՀՀ-ում շարունակում էին գործել ՀԽՍՀ Սահմանադրության դրույթները, թեև դրանք հակասում էին Անկախության հռչակագրի հիման վրա ստեղծված օրենքներին:
9) Կիրառական երկրաբանության բնագավառում հսկայական աշխատանքներ են կատարել Մխիթար Ջրբաշյանը և Հովսեփ Տեր-Աստվածատրյանը:

*Ճիշտ պատասխանն է 4; 5 և 7:*

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

**2013** թ. Միասնական քննություն

*Պատասխանների ձևաթուղթ*

*Հայոց պատմություն*

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

*Եղե՛ք ուշադիր*

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 3

Թեստ № 1 2 3 4

Ա մակարդակ

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Պատասխանի համարը

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 1 |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 2 |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 3 |
| 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 4 |

Պատասխանի համարը

| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 1 |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 2 |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 3 |
| 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 4 |

Պատասխանի համարը

| | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | |
| 2 | | | | | | |
| 3 | | | | | | |
| 4 | | | | | | |

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

47

48

49

50

Ա մակարդակում փոխված պատասխանները ուղղելու տեղը

1
2
3
4

Բ մակարդակ

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Պատասխանի համարը

| | 51 | 52 | 53 | 54 | 55 | 56 | 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | 64 | 65 | 66 | 67 | 68 | 69 | 70 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 1 |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 2 |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 3 |
| 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 4 |

Պատասխանի համարը

| | 71 | 72 |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| 3 | | |
| 4 | | |

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

73 77

74 78

75 79

76 80

Բ մակարդակում փոխված պատասխանները ուղղելու տեղը

1
2
3
4

Ամբողջ ձևաթղթում փոխված պատասխանների քանակը

*Արտագրե՛ք այս նախադասությունը*

*Ծանոթ եմ քննության կարգին:*

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Պատասխանների ձևաթուղթը լրացվում է միայն սև գելային գրիչով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը համապատասխան համարի առաջադրանքի սյունակի չորս վանդակներից մեկում պետք է դնի «**X**» նշանը: Օրինակ, եթե քննություն հանձնողը 8-րդ առաջադրանքի համար ընտրել է 3-րդ պատասխանը, ապա դա պետք է գրանցի հետևյալ ձևով՝




Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս քննություն հանձնողը պատասխան(ներ)ը պետք է գրանցի նախատեսված հորիզոնական վանդակներում՝ ցանկացած հաջորդականությամբ: Հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան: Օրինակ, եթե 73-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանն է 2; 3 և 8, ապա այն պետք է գրանցել այս ձևով՝




Նույն առաջադրանքի պատասխանը կարելի է գրանցել նաև թվանշանների այլ հաջորդականությամբ: Օրինակ՝




Պատասխանների ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխաններն ուղղելու 5 հնարավորություն, որից 3-ը Ա մակարդակում, 2-ը՝ Բ մակարդակում: Ա մակարդակում տրված է ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ պատասխանի ուղղման 2 և կարճ պատասխանով առաջադրանքի սխալ պատասխանի ուղղման 1 հնարավորություն: Բ մակարդակում տրված է 1-ական այդպիսի հնարավորություն:

Եթե քննություն հանձնողը ընտրովի պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ

նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.



Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.



«Ամբողջ ձևաթղթում փոխված պատասխանների քանակը» բաժնի վանդակում անհրաժեշտ է գրել փոխված պատասխանների քանակը՝ 1, 2, 3, 4 կամ 5, իսկ եթե ոչինչ չի փոխվել՝ 0:

## ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Թեստում ընդգրկված առաջադրանքները ներառելու են «Հայոց պատմություն» առարկայի 2008 թ. ծրագրի հիման վրա ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ա. Մելքոնյանի և Ա. Սիմոնյանի խմբագրությամբ լույս տեսած ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-12-րդ դասարանների դասագրքերում ամփոփված նյութը:

Դասագրքերում առանձին դեպքերում առկա են ակնհայտ տարբերություններ բուն տեքստերում օգտագործված տարեթվերի և գրքի վերջում զետեղված «Ժամանակագրություն» խորագրով ցանկերի միջև: Տարընկալումների տեղիք չտալու համար ժամանակագրական բնույթի թեստային առաջադրանքներին պատասխանելիս պետք է հիմք ընդունել բացառապես դասագրքերի բուն տեքստերում տեղ գտած տարեթվերը, եթե դրանք վրիպակներ չեն (տես՝ «Դասագրքերում առկա վրիպակներ» բաժինը):

## ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԴԱՍԻՉ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները**

Հայկական լեռնաշխարհի դիրքը: Խոշոր գետերը: Վարչական բաժանումը:

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

**Հայոց ծագումնաբանությունը**

*Հայոց ծագումնաբանության հարցը:* Հնդեվրոպական նախահայրենիքը: Հայոց ծագումնաբանության վերաբերյալ ավանդազրույցները: Հայերի ծագման հարցը արդի պատմագիտության մեջ:

**Վաղ պետական կազմավորումները (Ք. ա. III հազարամյակ - Ք. ա. I հազարամյակի սկիզբ)**

Հայկազունների Այրարատյան թագավորությունը:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Վանի համահայկական թագավորությունը**

*Վանի թագավորության կազմավորումն ու հզորացումը: Արգիշտի I:* Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնումը: Իշպուինիի գահակալությունը: Թագավորության հզորացումը Մենուայի գահակալության շրջանում: Արգիշտի I:

*Վանի տերությունը Սարդուրի II-ի և նրա հաջորդների օրոք: Թագավորության անկումը:* Սարդուրի II. Չորս ծովերի տերությունը: Ասորեստանի դիրքերի ամրապնդումը: Վանի թագավորությունը Ք.ա. VIII դարի վերջին և Ք.ա. VII դարի առաջին կեսին: Թագավորության անկումը:

*Վանի թագավորության պետական կարգը և բանակը:* Պետական կարգը: Հայկական պետականության զարգացումը: Բանակը:

**Հայկազուն-Երվանդականների թագավորությունը**

*Հայաստանը Ք. ա. VII դարավերջից մինչև Ք. ա. 330-ական թվականները:* Սկայորդի և Պարույր Հայկազուններ: Հայկազուն-Երվանդականների թագավորությունը Ք. ա. VI դարում: Բեհիսթունյան արձանագրությունը Հայաստանի և հայերի մասին: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:

*Հայոց թագավորությունները Ք. ա. 331-201 թվականներին:* Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը: Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը:

*Հայկազուն-Երվանդականների թագավորության պետական կարգը:* Պետական կարգը: Թագավորության տարածքը, վարչական բաժանումը և բանակը:

**Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը**

*Նոր հարստության հիմնումը: Արտաշես I*: Արտաշես I-ի գահակալումը: Հայկական հողերի վերամիավորումը: Մեծ Հայքի միջազգային հեղինակության

անը: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Հողային բարեփոխումը: Ռազմավարչական և այլ բարեփոխումներ:

*Հայաստանը աշխարհակալ տերություն: Տիգրան II Մեծ:* Տիգրան II-ի գահակալությունը: Հայ-պոնտական դաշինքը և Կապադովկիայի նվաճումը: Հայ-պարթևական պատերազմը: Ասորիքի գրավումը: Տերության տարածքը, բնույթը, բնակչությունը: Տիգրանակերտի կառուցումը:

*Ռազմաքաղաքական նոր իրադրությունը Առաջավոր Ասիայում:* Հռոմեա-պոնտական հակամարտությունը: Հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլը: Արածանիի ճակատամարտը: Հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը: Արտաշատի պայմանագիրը: Տիգրան Մեծը՝ սերունդների հիշողության մեջ:

*Հայաստանի պայքարն ընդդեմ Հռոմի ծավալապաշտական քաղաքականության: Արտավազդ II:* Արտավազդ II-ի գահակալությունը: Հռոմեա-պարթևական պատերազմը և Հայաստանը: Անտոնիոսի արշավանքները:

*Արտաշեսյան թագավորության անկումը:* Արտաշես II: Վերջին Արտաշեսյանները:

**Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը I-III դարերում**

*Հայաստանը և Հռոմի ու Պարթևստանի մրցակցությունը:* Մեծ Հայքի թագավորությունը դրածո թագավորների օրոք: Հայաստանը և հռոմեա-պարթևական հակամարտությունը: Տասնամյա պատերազմը, Հռանդեայի պայմանագիրը:

*Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների գահակալումը:* Տրդատ I Արշակունին՝ Մեծ Հայքի թագավոր: Սանատրուկ II: Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը: Մեծ Հայքում Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:

*Մեծ Հայքը III դարում:* Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները: Տրդատ III Մեծի գահակալումը: Մծբինի հաշտությունը:

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**Հայկազուն-Երվանդականների ժամանակաշրջանի մշակույթը**

Առասպելները: Դիցարանը:

**Հայկական մշակույթը հելլենիզմի դարաշրջանում**

*Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը:* Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը: Հայոց դիցաշխարհը և կրոնական պատկերացումները:

Հայ հին դպրությունը. հայկական մեհենագրությունը և օտար գրահամակարգերի կիրառումը: Պատմագրությունը և գրականությունը: Թատրոնը:

*Արվեստը:* Շինարարության զարգացումը և ճարտարապետությունը: Քանդակագործությունը և կիրառական արվեստը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻՆ

### Քրիստոնեության հռչակումը պետական կրոն: Ավատատիրության հաստատումը

*Քրիստոնեության հռչակումը պետական կրոն:* Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը: Քաղաքական և կրոնական վիճակի բարդացումը: Տրդատ III Մեծի գահակալության օրոք Սբ. Գրիգորի գործունեությունը: Հայ առաքելական եկեղեցու նվիրապետության հաստատումը: Ազգային և քրիստոնեական արժեքների ներդաշնակումը: Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:

*Ավատատիրության հաստատումը Հայաստանում:* Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Ավատատիրական հողատիրության ձևերը: Ավատատիրական աստիճանակարգը: Պետական կառավարման համակարգը: Բանակը: Բնակչությունը:

### Արշակունյաց թագավորությունը IV դարում և V դարի սկզբին

*Պայքար կենտրոնական իշխանության ուժեղացման համար:* Մեծ Հայքի թագավորության վերելքը Տրդատ III Մեծի օրոք: Խոսրով III Կոտակի քաղաքականությունը: Տիրանի գահակալությունը:

*Արշակ II և Պապ թագավորների քաղաքականությունը:* Ներքաղաքական իրավիճակը: Արշակ II-ի քաղաքականությունը և պարսկա-հռոմեական պատերազմը: Հայ-պարսկական պատերազմը: Արշակ II-ի և Վասակի դավադրական սպանությունը: Պապ թագավորի գահակալությունը: Պապի բարեփոխումները:

*Հայոց Արշակունյաց թագավորության մայրամուտը:* Վարազդատի գահակալությունը և Մուշեղ սպարապետի ծրագիրը: Արշակ III-ի գահակալությունը և Մանվել սպարապետը: Հայաստանի պարսկա-հռոմեական բաժանումը և Խոսրով IV-ի միավորիչ ջանքերը: Վռամշապուհի համապետական գործունեությունը: Հայ Արշակունիների հարստության անկումը և դրա հետևանքները:

### Հայկական պետականության նախարարական շրջանը

*Արևելյան Հայաստանի մարզպանական կարգավիճակը: Վարդանանց պատերազմը:* Նախարարական համակարգը: Հայ ժողովրդի վիճակի ծանրացումը: Ապստամբության սկիզբը և ծավալումը: Խաղխաղի ճակատամարտը: Ավարայրի ճակատամարտը: Վարդանանց պատերազմի արդյունքները:

*Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը 481-484 թթ.:* Մարզպանական Հայաստանի քաղաքական իրավիճակը: Ապստամբական պայքարը: Նվարսակի պայմանագիրը:

*Հայաստանը VI դարում:* Վաչագան Բարեպաշտի թագավորությունը Հայոց Արևելից կողմերում: Քաղաքական իրավիճակը և Դվինի 506 թ. ժողովը: Արևմտյան Հայաստանը VI դ. առաջին կեսին: 571 թ. ապստամբությունը և պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմը: Հայաստանի 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումը:

*Հայաստանը VII դարում:* Պարսկա-բյուզանդական պատերազմի վերսկսումը: Հայաստանի քաղաքական վիճակը VII դարի 20-30-ական թթ.: Հայաստանը և արաբների զավթողական պատերազմները: Հայ-արաբական պայմանագիրը: Հայաստանի անկախության վերականգնումը:

*Հայ նախարարական համակարգը արաբական խալիֆայության գերիշխանության շրջանում:* «Արմինիա» փոխարքայության կազմավորումը: Հակաարաբական ապստամբությունները VIII դարի առաջին կեսին: 774-775 թթ. ապստամբությունը: Հայկական իշխանական տների հզորացումը: 850-855 թթ. ապստամբությունը:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

### Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը

*Հայաստանի անկախության վերականգնումը և ամրապնդումը:* Հայկական պետականության վերականգնման նախադրյալները: Հայկական թագավորության վերականգնումը. Աշոտ I Բագրատունի: Երկրի անկախության ամրապնդումը. Սմբատ I, Աշոտ II Երկաթ:

*Բագրատունյաց Հայաստանի վերելքը:* Պետության բարգավաճումը. Աբաս Բագրատունի, Աշոտ III Ողորմած, Սմբատ II: Անին՝ մայրաքաղաք: Բագրատունյաց թագավորության հզորացումը X դ. վերջին և XI դ. սկզբին. Գագիկ I:

*Պետական կառավարման համակարգը: Տնտեսության վերելքը:* Պետական կարգը: Տնտեսական կյանքի զարգացումը: Քաղաքները:

*Բագրատունյաց թագավորության մասնատումն ու անկումը:* Կենտրոնացված պետություն ստեղծելու ջանքերը: Ենթակա թագավորությունների առաջացումը: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը: Պայքար պետականության պահպանման համար. Գագիկ II:

### Հայոց պետականությունը XI - XIV դարերում

*Հայաստանը XI դարի երկրորդ կեսին:* Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքները: Հայկական թագավորությունները և իշխանությունները: Հայաստանը սելջուկ-թուրքերի արշավանքների շրջանում:

*Հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ (XII-XIV դարեր):* Պայքար սելջուկ թուրքերի և մահմեդական ամիրայությունների դեմ: Զաքարյանների իշխանապետությունը Հայաստանում: Իշխանական նոր տները: Մոնղոլական ասպատակությունները: Պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ:

### Կիլիկյան Հայաստանը

*Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում:* Հայկական պետականության առաջացման նախադրյալները: Հայկական իշխանությունների առաջացումը: Հայկական պետության առաջացումը Կիլիկիայում. Ռուբեն I:

*Կիլիկյան Հայաստանի ամրապնդումը: Հայոց թագավորության վերականգնումը:* Պայքար Դաշտային Կիլիկիայի համար: Ռուբինյան իշխանության ընդլայնումը և ամրապնդումը: Քաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում XII դ. վերջին: Թագավորության հռչակումը. Լևոն I Մեծագործ:

*Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII-XIV դարերում:* Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Հայ-մոնղոլական դաշինքը: Կիլիկյան Հայաստանը մոնղոլների և մամլուքների միջև: Կիլիկիայի հայկական թագավորության թուլացումը և անկումը:

*Կիլիկյան Հայաստանի պետական կարգը:* Արքունիքը և բանակը:

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

**Կորուստների և վերականգնումի ժամանակաշրջան (XV դար - XVII դարի առաջին կես)**

*Հայաստանը XV դարում:* Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները:

*Հայաստանը XVI դարում և XVII դարի առաջին կեսին:* Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին: Հայաստանը և թուրք-պարսկական պատերազմները: Հայ բնակչության բռնագաղթը:

*Հայաստանի ազատագրության համար պայքարի աշխուժացումը:* Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում: Հայաստանի ազատագրության պայքարի նոր փուլի սկզբնավորումը: Արցախի, Սյունիքի մելիքությունները, Զեյթունի իշխանությունը:

## ԲԱԺԻՆ 4. ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

**Ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացումը**

*Հայ գրերի գյուտը:* Մեսրոպ Մաշտոցի պատմական առաքելությունը: Հայ գրերի գյուտը և նշանակությունը: Դպրոցը:

*Հայ մշակույթի Ոսկեդարը:* Պատմագրություն: Փիլիսոփայություն:

*Մշակութային ձեռքբերումները VI-VIII դարերում:* Պատմագրություն: Աշխարհագրություն: Տոմար: Արվեստ:

**Հայկական մշակույթը X-XIV դարերում**

*Մշակույթի վերելքը: Կրթությունը:* Դպրոցները և համալսարանները:

Պատմագրությունը: Իրավունքը: Բնափիլիսոփայությունը:

*Գրականությունը և արվեստը: Գրականությունը:* Ճարտարապետությունը և քանդակագործությունը: Նկարչությունը:

**Մշակույթը դժվարին ժամանակներում (XV դար - XVII դարի առաջին կես)**

*Հայկական տպագրությունը: Կրթությունը:* Տպագրության սկզբնավորումը և զարգացումը: Դպրոցը:

*Գիտությունը և արվեստը:* Պատմագրությունը: Արվեստը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

### ԲԱԺԻՆ 1. ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (XVII դարի երկրորդ կես-XIX դարի առաջին կես)

**Ազատագրական շարժումները XVII դ. երկրորդ կեսին և XVIII դարում**

*Ազատագրական պայքարի նոր փուլը:* Շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը: Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվիրակության գործունեությունը: Հայաստանի ազատագրության Իսրայել Օրու ծրագրերը: Օրին Ռուսաստանում: Օրու գործունեության նշանակությունը:

*Ազատագրական զինված պայքարն Արցախում:* Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում XVIII դարի սկզբին: Ռազմական ամրությունների (սղնախներ) կազմավորումը Արցախում: Ռուսական զորքերի 1722 թ. Կասպիական արշավանքը: Թուրքական զորքերի ներխուժումը: Երևանի հերոսական պաշտպանությունը: Շարժման ծավալումն Արցախում:

*Սյունիքի հայկական իշխանությունը:* Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ Բեկ: Սյունիքի հայկական իշխանության կազմավորումը: Մխիթար սպարապետ: Ապստամբության ավարտը:

*Զինված պայքարի արդյունքները և Պարսկաստանի նոր քաղաքականությունը:* Զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավարությունը Արցախում (Խամսայի մելիքություններ):

*Ազատագրական պայքարը XVIII դարի կեսերին:* Պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմին. գործունեության նշանակությունը: Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագիրը: Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագիրը:

*Հնդկահայ ազատագրական կենտրոնը:* Մադրասի հայրենասիրական խմբակը: «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» աշխատությունները: Հայաստանի ազատագրության Հարավային (Շահամիր Շահամիրյանի) ծրագիրը:

**Հայոց պետականության վերականգնման խնդիրը XIX դարի առաջին կեսին**

*Արևելյան Հայաստանը XIX դարի սկզբին:* Վարչաքաղաքական իրավիճակը: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման սկիզբը: Հայերը 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում: Գյուլիստանի հաշտությունը:

*Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նոր փուլը:* Արևելյան Հայաստանը և ռուս-պարսկական նոր պատերազմի սկիզբը: Հայերի մասնակցությունը պատերազմին և նրանց սպասելիքները: Օշականի ճակատամարտը: Երևանի գրավումը: Թուրքմենչայի պայմանագիրը և արևելահայությունը:

*Արևմտահայությունը XIX դարի առաջին երեսնամյակում:* 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկիզբը: Հայերը ռազմական գործողությունների ընթացքում: Էրզրումի գրավումը և Ադրիանապոլսի հաշտությունը:

*Հայաստանը XIX դարի 30-40-ական թվականներին:* Հայաստանի ազատագրության նոր ծրագիրը: Հայկական մարզը: Ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Արևմտահայությունը 1830-1840-ական թթ.:

## ԲԱԺԻՆ 2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ և XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**Հայկական հարցի միջազգայնացումը**

*Արևելյան հարցի սրումը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը:* Արևելյան հարցը և Ղրիմի պատերազմը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառները և սկիզբը: Պատերազմը Կովկասյան ճակատում: Հայերի մասնակցությունը և ակնկալիքները:

*Հայկական հարցի միջազգայնացումը:* Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և Հայկական հարցը: Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում:

**Հայ քաղաքական կյանքի վերելքը**

*Ազգային-հասարակական շարժումները:* Արևմտահայերի ազգային սահմանադրությունը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

*Ազատագրական պայքարի նոր գաղափարախոսությունը: Ազատագրական խմբակները:* Զինված պայքարի գաղափարախոսության ձևավորումը: Զինված պայքարի նոր դրսևորումները: Ազատագրական խմբակների ձևավորումը: Ազատագրական կազմակերպությունները 1880-ական թթ.:

*Հայ ազգային կուսակցությունները:* Արմենական կուսակցություն: Հնչակյան կուսակցություն: Հայ հեղափոխական դաշնակցություն:

**Ազատագրական պայքարի զինված փուլը**

*Ազատագրական պայքարի վերելքը: Հայդուկային շարժումը:* Հայդուկային շարժման առաջացման պատճառները: Հայդուկային պայքարի առաջին քայլերը: Շարժման վերելքը. նշանավոր հայդուկները: Հայդուկային շարժումը և կուսակցությունները:

*Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի իրագործման սկիզբը:* Արևմտահայերի ցեղասպանության աբդուլհամիդյան ծրագիրը: 1894-1896 թթ. զանգվածային կոտորածները:

*Հայ ազատագրական պայքարը 1894-1896 թվականներին: Հայկական հարցը և տերությունները:* Սասունի 1894 թ. հերոսամարտը: Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը: Վանի 1896 թ. հերոսական ինքնապաշտպանությունը: Մայիսյան բարենորոգումների ծրագիրը:

**Հայ ազատագրական շարժումները XX դարի սկզբին**

*Պայքար ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ:* Ցարիզմի գաղութային քաղաքականությունը և հայ ժողովրդի պայքարը: Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները:

*Ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում:* Ս. Առաքելոց վանքի կռիվը: Սասունի 1904 թ. ապստամբությունը:

*Երիտթուրքերի հեղաշրջումը և արևմտահայությունը:* Երիտթուրքերի հեղաշրջումը: Հայերի ոչնչացման ծրագրի շարունակումը: Պանթյուրքիզմը՝ պետական քաղաքականություն:

*Հայկական հարցը 1912-1914 թվականներին:* Հայկական հարցի վերաբացումը: Դիվանագիտական պայքարը: Ռուս-թուրքական համաձայնագիրը:

**Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին**

Աշխարհամարտի սկիզբը:

*Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատը:* Օսմանյան կայսրության և Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը Մերձավոր Արևելքում: Պատերազմի ընթացքը կովկասյան ճակատում 1914-1916 թվականներին: Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Ռուսաստանի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի գրավված տարածքում:

*Հայ կամավորական շարժումը:* Կամավորական շարժումը: Հայկական ջոկատների մասնակցությունը մարտական գործողություններին: Կամավորական ջոկատների վերածումը կանոնավոր զինուժի:

*Հայոց Մեծ եղեռնը:* Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն: Մեծ եղեռնը: Հայերի ինքնապաշտպանական մարտերը:

*Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը:* Մեծ եղեռնի հետևանքները: Տերությունների և միջազգային հանրության վերաբերմունքը:

*Հայ ազգային-քաղաքական կյանքի վերելքը 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո:* Նոր իշխանության ձևավորումը Այսրկովկասում: Ժամանակավոր կառավարությունը և Արևմտյան Հայաստանը: Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը: Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը:

*Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը:* Իրադրությունը Այսրկովկասում և Կովկասյան ճակատում: «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Արևմտահայ զորամիավորման ստեղծումը: Հայկական հարցը Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում:

*Իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում (1918 թ. հունվար-ապրիլ)*: Հայկական կանոնավոր զորքի ստեղծումը: Պատերազմի վերսկսումը: Հայկական զորքի վերակազմակերպումը: Այսրկովկասի անջատումը Ռուսաստանից:

*1918 թ. մայիսյան հերոսամարտերը:* Թուրք-անդրկովկասյան պատերազմի վերաճումը թուրք-հայկականի: Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերը: Ղարաքիլիսայի հերոսամարտը: Մայիսյան ճակատամարտերի պատմական նշանակությունը:

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

**Մշակույթը XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը**

*Մշակութային ձեռքբերումները XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում:* Առաջին հայ պարբերականը: Պատմագիտությունը:

*Հայ մշակույթը XIX դարի առաջին կեսին:* Դպրոցական կյանքի վերելքը: Գիտությունը: Արվեստը:

**XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի մշակութային վերելքը**

*Բնական և հումանիտար գիտությունների զարգացումը:* Բնական գիտությունները: Հայագիտությունը: Պատմագիտության զարգացումը:

*Արվեստը և ճարտարապետությունը:* Կերպարվեստը: Թատրոնը: Երաժշտությունը: Ճարտարապետությունը:

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

### Երկրի ներքին կյանքը

*Հայկական պետականության ձևավորումն ու ամրապնդումը:* Հայաստանի հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Հայերենը՝ պետական լեզու: Ազգային բանակը:

*Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը:* Սոցիալ-տնտեսական կացությունը: Տնտեսական վերափոխումները: Հասարակական-քաղաքական կյանքը: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը:

### Հանրապետության միջազգային դրությունը: Հայկական հարցը

*Հանրապետության արտաքին կապերը և հարաբերությունները:* Հարաբերությունները Քառյակ միության երկրների հետ: Հայ-վրացական հարաբերությունները: Հայ-ադրբեջանական հարաբերությունները:

*Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը:* Հայկական պատվիրակությունների գործունեությունը Փարիզի խորհրդաժողովում: Միացյալ և անկախ Հայաստանի հռչակումը: Հայկական հարցը Սան Ռեմոյի կոնֆերանսում: Սևրի պայմանագիրը և Հայաստանը:

*Իրադրությունը Կիլիկիայում և կիլիկիահայությունը:* Հայկական լեգեոնը: Կիլիկիահայության դրությունը և ինքնապաշտպանական մարտերը:

### Առաջին հանրապետության անկումը

*Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի քաղաքականության ոլորտում:* Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Քեմալական շարժումը և Հայաստանը: Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում: 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագիրը: Քեմալա-բոլշևիկյան համագործակցությունը: Թուրք-հայկական պատերազմը:

*Հայաստանի խորհրդայնացումը:* Հայ-ռուսական բանակցությունները Երևանում: Ներքաղաքական ճգնաժամը: Հայաստանի խորհրդայնացումը:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

### Խորհրդային Հայաստանը 1920-1922 թթ.

*Խորհրդային իշխանության հաստատումը: Փետրվարյան ապստամբությունը:* Կառավարման նոր համակարգի ձևավորումը: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը և դրա հետևանքները: Փետրվարյան ապստամբությունը: Անցումը նոր տնտեսական քաղաքականության և արտաքին օգնությունը:

*ՀՍԽՀ Սահմանադրությունը: Խորհրդային Հայաստանը Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմում:* ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը: ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը: Հայաստանը Անդրդաշնության կազմավորման գործընթացում: ԽՍՀՄ-ի կազմավորումը:

*ՀՍԽՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը:* Լոռու չեզոք գոտու և Ջավախքի հիմնախնդիրը: Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և

Նախիջևանի հիմնախնդիրը: Հայկական տարածքների հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերում:

## ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄՈՒՄ

**Սոցիալիստական հասարակության ձևավորումը**

*Նոր տնտեսական քաղաքականությունը: Արդյունաբերացումը և կոլեկտիվացումը:* Նէպը և դրա արդյունքները: Արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը:

*Հասարակական-քաղաքական կյանքը:* Կոմունիստական կուսակցության մենիշխանության հաստատումը և այլ կուսակցությունների գործունեության արգելումը: Ներկուսակցական պայքարը: Անհատի պաշտամունքի ձևավորումը: Քաղաքական բռնաճնշումները: Պետության անհանդուրժողական քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ:

**Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941 -1945 թթ.)**

*Հայ ժողովրդի ներդրումը Մեծ հայրենականում:* Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Հայ ռազմիկների մասնակցությունը մարտական գործողություններին: Պատերազմի հայ հերոսները և զորավարները:

**Խորհրդային Հայաստանը հետպատերազմյան տարիներին (1945-1985 թթ.)**

*Հանրապետության քաղաքական դրությունը:* Քաղաքական բռնաճնշումների նոր փուլը: 1949 թ. զանգվածային աքսորը: Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: Անհատի պաշտամունքի հետևանքների հաղթահարումը: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը: Այլախոհությունը Հայաստանում:

**Խորհրդային Հայաստանը վերակառուցման տարիներին**

*Վերակառուցման քաղաքականությունը: Արցախյան շարժումը:* Արցախյան շարժման նոր փուլը: Հանրահավաքներ Երևանում: Սումգաիթյան ողբերգությունը: Շարժման հետագա վերելքը: Խորհրդային բանակի և Ադրբեջանի հատուկջոկատայինների գործողությունները ԼՂԻՄ-ում:

*Հայաստանի անկախացման գործընթացը:* Շրջադարձային փոփոխություններ հանրապետության քաղաքական կյանքում: Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: ԽՍՀՄ-ի պահպանման փորձերը: ԽՍՀՄ-ի փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը:

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

**Հայաստանի Հանրապետությունը**

*Անկախ պետականության կայացման գործընթացը:* Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: ՀՀ Սահմանադրության ընդունումը:

*Հասարակական-քաղաքական կյանքը:* Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Ներքաղաքական զարգացումները 1999-2010 թթ.:

*ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:* Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը**

Անկախության հռչակումը և պետականության ձևավորումը: Արցախյան պատերազմի ծավալումը: Շուշիի ու Լաչինի ազատագրումը: Պատերազմի հետագա ընթացքը: Ղարաբաղյան բանակի հաղթանակը և զինադադարի կնքումը (1994 թ. մայիս): Արցախյան ազատամարտի հերոսները:

## ԲԱԺԻՆ 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

**Հայկական Սփյուռքը 1920-1939 թվականներին**

Սփյուռքի առաջացումը: Հայկական հարցը և սփյուռքահայությունը: Սփյուռքահայերի հայրենադարձությունը:

**Հայկական Սփյուռքը 1946-1991 թվականներին**

*Հայրենադարձությունը: Սփյուռքահայ կենտրոնները:* 1946-1948 թթ. զանգվածային հայրենադարձությունը: 1950-1980-ական թվականների հայրենադարձությունը: Սփյուռքահայության տեղաշարժերը:

*Հասարակական-քաղաքական կյանքը:* Սփյուռքահայության պայքարը հայ դատի համար պատերազմի ավարտական փուլում: Համաշխարհային հայկական կոնգրեսը: Սփյուռքահայերի հետագա պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար:

## ԲԱԺԻՆ 6. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱ-ՇՐՋԱՆՈՒՄ

**Մշակույթը 1920-1941 թվականներին**

*Գիտության զարգացումը:* Հասարակական գիտությունների զարգացումը: Կիրառական և բնական գիտությունների զարգացումը:

*Գրականությունը և արվեստը*: Խորհրդահայ գրականությունը: Թատրոնը և կինոարվեստը: Կերպարվեստը և երաժշտությունը:

Ճարտարապետությունը:

**Մշակույթի վերելքը (1945-1991 թթ.)**

*Գիտությունը:* Գիտությունների ակադեմիան: Գիտահետազոտական կենտրոնները: Կիբեռնետիկայի, էլեկտրոնիկայի զարգացումը: Հայագիտության զարգացումը:

*Արվեստը:* Երաժշտությունը: Թատրոնը: Կինոն: Կերպարվեստը:

Ճարտարապետությունը:

**Հայկական մշակույթի արդի վիճակը**

Մշակույթի դժվարին վիճակը:

# Դասագրքերում նկատված վրիպակներ

«Հայոց պատմություն» առարկայի դասագրքերում կան որոշ անճշտություններ և տպագրական սխալներ: Տեղեկացնում ենք, որ պետական ավարտական և միասնական քննությունների քննական թեստերում տվյալ թեմաների ընդգրկման դեպքում ճիշտ պատասխան են համարվելու ոչ թե դասագրքում առկա վրիպակները, այլ ստորև բերված աղյուսակում դրանց ճշգրտված տարբերակները:

**10-րդ դասարան**

| Տպագրված է | Պետք է լինի |
|---|---|
| էջ 62, 1-ին սյունակ, ներքևից 11-12-րդ տողեր՝ Պտղոմեոս IX | Պտղոմեոս XI |
| էջ 74, 1-ին սյունակ, վերևից 17-րդ տող՝ (Ք. ա. 2- Ք. ա. 1 դդ.) | (Ք. ա. 2- Ք. հ. 1 դդ.) |
| էջ 75, 2-րդ սյունակ, վերևից 16-րդ տող՝ Զենոն-Արտաշեսից հետո Հռոմը | Զենոն-Արտաշեսից հետո՝ մոտ մեկ տարի անց, Հռոմը |
| էջ 96, 2-րդ սյունակ, ներքևից 6-րդ տող՝ Երնջակ | Դերջան |
| էջ 96, 2-րդ սյունակ, վերևից 12-13-րդ տողեր Դարանաղյաց | Եկեղյաց |
| էջ 100, 1-ին սյունակ, ներքևից 7-8-րդ տողեր՝ Ամֆիկատրես | Ամֆիկրատես |
| էջ 124, 1-ին սյունակ, ներքևից 18-րդ տող՝ Դարանաղիում: | Դարանաղիում, որտեղ ևս ամփոփված էին հայ Արշակունիներ: |
| էջ 137, 1-ին սյունակ, վերևից 18-րդ տող՝ Վաղարշակի | Վարշակի |
| էջ 148, 2-րդ սյունակ, վերևից 10-րդ տող՝ նահանգի | գավառի |
| էջ 150, 2-րդ սյունակ, վերևից 1-ին տող՝ 851 թ. | 850 թ. |
| էջ 153, 2-րդ սյունակ, վերևից 18- | հարստության (867-1057 թթ.) |

| | |
|---|---|
| 19-րդ տողեր՝<br>հարստության հիմնադիր Վասիլ I կայսրը (867-1057 թթ.) | հիմնադիր Վասիլ I կայսրը |
| էջ 158, 2-րդ սյունակ, վերևից 13-րդ տող՝<br>Վասիլ | Հաջորդ տարի Վասիլ |
| էջ 164, 2-րդ սյունակ, ներքևից 12-13-րդ տողեր՝<br>այդ երկրամասի թագավոր: Արաբները | Հայոց թագավոր: Արծրունիները |
| էջ 166, 1-ին սյունակ, 7-րդ տող<br>մահացավ 1001 թ. և Վասիլ II-ը | մահացավ և Վասիլ II-ը 1001 թ. |
| էջ 169, 2-րդ սյունակ, վերևից 12-րդ տող<br>Սմբատավան | Սմբատաբերդ |
| էջ 177, 2-րդ սյունակ, վերևից 7-րդ տող՝<br>Կուրոպալատին | Կյուրապաղատին |
| էջ 209, 1-ին սյունակ, վերևից 1-ին տող՝բանակցություններից | բանահյուսությունից |
| էջ 218, 1-ին սյունակ, ներքևից 9-րդ տող՝վանքին կից | վանքի մոտ |
| էջ 218, 1-ին սյունակ, ներքևից 9-րդ տող՝և | ինչպես և |
| էջ 227, 2-րդ սյունակ, ներքևից 13-րդ տող՝<br>կյանքն | կյանքի ավարտն |

**11-րդ դասարան**

| Տպագրված է | Պետք է լինի |
|---|---|
| էջ 26, 1-ին սյունակ, վերևից 3-4-րդ տողեր<br>Սեֆյան Իրանի | Իրանի |
| էջ 67, 2-րդ սյունակ, ներքևից 3-4-րդ տողեր՝<br>1869 թ.՝ պատրիարք դառնալուց հետո, Մկրտիչ Խրիմյանի սահմանադրությունը | 1869 թ.՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարք դառնալուց հետո, սահմանադրությունը |
| էջ 72, 2-րդ սյունակ, ներքևից 8-9-րդ տողեր՝<br>Համաձայն ընկերության անդամները, զաղտնիության | Գաղտնիության սկզբունքի համաձայն՝ ընկերության |

| սկզբունքի՝ | անդամները |
|---|---|
| էջ 80, 1-ին սյունակ, վերևից 1-ին տող՝<br>1890-ական թթ. սկզբներին | 1890-ական թթ. |
| էջ 81, 1-ին սյունակ, վերևից 9-րդ տող<br>ապա նրանց հետ միացել | ապա Գուրգենի հետ միացել |
| էջ 109, 1-ին սյունակ, վերևից 20-րդ տող՝<br>Լավատես էր Նուբար | Լավատես էր Պողոս Նուբար |
| էջ 116, 1-ին սյունակ, ներքևից 2-րդ տող<br>միավորվեցին խմբի հետ | միավորվեցին Վարդանի խմբի հետ |
| էջ 184, 2-րդ սյունակ, ներքևից 18-րդ տող<br>Երևանի և Էջմիածնի գավառների կեսը | Երևանի գավառի կեսը |
| էջ 186, 2-րդ սյունակ, վերևից 9-րդ տող<br>Հունիսի 21-23-ը | 1919 թ. հունիսի 21-23-ը |
| էջ 189, 1-ին սյունակ, վերևից 22-րդ տող<br>Արշակ Շուխաայանը | Արշակ Ղուկասյանը |
| էջ 189, 2-րդ սյունակ, ներքևից 18-րդ տող<br>Հայաստանի ժողովրդական կուսակցությունը | Հայ ժողովրդական կուսակցությունը |

**12-րդ դասարան**

| Տպագրված է | Պետք է լինի |
|---|---|
| էջ 9, 2-րդ սյունակ, վերևից 18-րդ տող<br>1928 թ. դեկտեմբերից | 1929 թ. դեկտեմբերից |
| էջ 51, 1-ին սյունակ, վերևից 6-րդ տող<br>2005 թ. նոյեմբերի 25-ին | 2005 թ. նոյեմբերի 27-ին |
| էջ 104, 1-ին սյունակ, վերևից 8-րդ տող<br>1933 թ. | 1938 թ. |

## Հանձնարարվող գրականություն


1. «Հայոց պատմություն», ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, Խմբ.՝ Ա. Մելքոնյան և Ա. Սիմոնյան, Եր., 2009:

2. «Հայոց պատմություն», ավագ դպրոցի 11-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, Խմբ.՝ Ա. Մելքոնյան և Ա. Սիմոնյան, Եր., 2010:

3. «Հայոց պատմություն», ավագ դպրոցի 12-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, Խմբ.՝ Ա. Մելքոնյան և Ա. Սիմոնյան, Եր., 2011:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


1. Նախաբան.......................................................................................3

2. Թեստի կառուցվածքը և թեմատիկ բովանդակային բաշխումը…………………………………………………………………..4

3. Բացատրություններ առաջադրանքների կատարման վերաբերյալ…………………………………………………………………6

4. Պատասխանների ձևաթուղթ.………………………...................21

5. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը…………………………………………………...........22

6. Թեստային առաջադրանքներում ընդգրկվող նյութը……………………………………………………………………….24

7. Բովանդակային դասիչ…………………….. …......................24

8. Դասագրքերում նկատված վրիպակներ……………………….35

9. Հանձնարարվող գրականություն..............................................38

Տպագրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 30165 օրինակ, 40 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57-63-37
Գրքույկը վաճառքի ենթակա չէ:
www.atc.am